ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/11 - ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/20» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 7-ը դեկտեմբերի 2016թ.

Ժամը 12^{00}

Մասնակցում էին՝

Գնահատողներ՝

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԹԱ վարչության պետ, գնդապետ Վ. Գասպարյան (ԳԱՊ),

ՀՀ ՋՈՒ թիկունքի վարչության իրային ծառայության պահեստների, տեխնիկական միջոցների և բաղնիք-լվացքատնային սպասարկման բաժանմունքի պետ, փոխգնդապետ Ա. Սարկիսյան,

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության իրային, ՎՔՆ, կոլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Գ. Ուխտյան,

ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության ավագ սպա, մայոր Ա. Հակոբյան,

Գնումները համակարգող՝

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ, ՔՀԾ 1-րդ դասի խորհրդական Ա. Գրիգորյան:

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/11 – ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/20» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Գրիգորյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2.«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/11-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/20» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4 Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/11-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/20» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Ա. Գրիգորյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար «Օճառի» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/11-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/20» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակցի անվանում
1	«Մակրո Ֆուդ» ՍՊԸ
2	«Յունիքիմ » ՍՊԸ
3	Ա/Ձ Նաիրի Թորոսյան
4	Ա/Ձ Արտաշես Հովհաննիսյան
5	«Բրենդ Դիստրիբյուտոր» ՍՊԸ
6	«Տիգման գրուպ» ՍՊԸ
7	«Մեծ Ծիածան» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:.

2 .«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/11 - ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/20» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրչավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Ա. Գրիգորյան)

2.1 Թվով 7 մասնակիցների էլեկտրոնային հայտերը www.armeps.am կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի,

2.2 Թվով 7 մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

2.3 «Մակրո Ֆուդ» ՍՊԸ-ի, Ա/Ձ Նաիրի Թորոսյանի, Ա/Ձ Արտաշես Հովհաննիսյանի, «Բրենդ Դիստրիբյուտոր» ՍՊԸ-ի և «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ի հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/11-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/20» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին):

«Յունիքիմ» ՍՊԸ -ի հայտի բոլոր հավելվածներում, այդ թվում գնային առաջարկում բացակայում են էլեկտրոնային ստորագրությունները, որի հիմքով էլ հանձնաժողովը մերժել է նրա հայտը:

«Տիգման գրուպ» ՍՊԸ-ի հայտում առկա է անհամապատասխանություն: Մասնավորապես՝ «Տիգման գրուպ» ՍՊԸ -ն հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ, սակայն գնման հայտով ներկայացվել է Հավելված 3.3.1-ը, այնինչ պետք է ներկայացվեր Հավելված 3.3-ը:

Գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է հայտերի գնահատման նիստը և մասնակցին ծանուցել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկել անհամապատասխանությունը, որի հիման վրա էլ հանձնաժողովը մերժել է նրա հայտը և նիստը շարունակվել է:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Ա. Գրիգորյան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ են ներկայացրել 5 մասնակից.

ՀՀ	Ապրանքի անվանումը	Չ/Մ	Քանակը	1-ին տեղ զբաղեցնող կազմակերպության			Մրցույթին մասնակցող կազմակերպությունների		
				անվանումը	գինը		անվանումները	գինը	
					առանց ԱԱՀ	ԱԱՀ-ով		առանց ԱԱՀ	ԱԱՀ-ով
1	2	3	4	8	9	9,1	12	13	13,1
1	Ձեռքի օճառ	կգ	62 991	«Մակրո Ֆուդ» ՍՊԸ	39 211 896	47 054 277	«Մակրո Ֆուդ» ՍՊԸ	39 211 896	47 054 277
2	Ձեռքի օճառ, հեղուկ	կգ	1 100	Ա/Ձ Նաիրի Թորոսյան	595 833	715 000	Ա/Ձ Նաիրի Թորոսյան	595 833	715 000
							«Մեծ Ծիածան» ՍՊԸ	1 081 666.62	1 298 000
							Ա/Ձ Արտաշես Հովհաննիսյան	785 400	785 400
3	Տնտեսական օճառ	կգ	32 633	«Բրենդ Դիստրիբյուտոր» ՍՊԸ	12 155 792	14 586 951	«Բրենդ Դիստրիբյուտոր» ՍՊԸ	12 155 792	14 586 951
							«Մակրո Ֆուդ» ՍՊԸ	13 542 695	16 251 234

«Մակրո Ֆուդ» ՍՊԸ-ն, Ա/Ձ Նաիրի Թորոսյանը, Ա/Ձ Արտաշես Հովհաննիսյանը, «Բրենդ Դիստրիբյուտոր» ՍՊԸ-ն և «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ն առաջարկել են ԵՏՄ անդամ երկրների արտադրության ապրանքներ:

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

3.3 Ընթացակարգում բանակցություններ չեն վարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկներիի հիման վրա «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/11-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/20» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Ա. Գրիգորյան)

4.1 12.07.2016թ. «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/11-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/20» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգում ըստ չափաբաժինների 1-ին տեղ զբաղեցնող են ճանաչվել «Մակրո Ֆուդ» ՍՊԸ-ն, Ա/Ձ Նաիրի Թորոսյանը և «Բրենդ Դիստրիբյուտոր» ՍՊԸ-ն:

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնելու «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/11-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/20» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

4.3 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում ներկայացնել առաջին և հաջորդ տեղ (եթե առկա է) զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ընթացակարգի հրավերի ***«Ֆինանսական միջոցներ»*** որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Ա. Գրիգորյան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Գրիգորյան)

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/11-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/20» ծածկագրով ընթացակարգի նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը, ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող Վ. Գասպարյան

Գնահատող Ա. Սարկիսյան

Գնահատող Գ. Ուխտյան

Գնահատող Ա. Հակոբյան

Գնումները համակարգող՝ Ա. Գրիգորյան